



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող՝

Արամ Մեյմարյան

«01» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 230 - 25

Նախաձեռնող՝

«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ

ք. Երևան 0014, Աղոնց 6/1

Գործունեություն՝

«Գառնի-Երևան Միսկոմբինալ» ջրափարի
վրա «Արարադյան ՕԿՁ» փհէկի կառուցում
ք.Երևան, Արին Բերդ փողոցի 5-րդ նրբանցք, 7/4

Առդիր՝ 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 230 - 25

« 01 » հոկտեմբեր 2025թ.

«Գառնի-Երևան Միսկոմբինատ» ջրատարի վրա 215 կՎտ հզորությամբ
«Արարատյան ՕԿՋ» փհէկի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ՀՀ, ք.Երևան, Էրեբունի վարչական շրջան, Արին Բերդ փողոցի 5-րդ նրբանցք, 7/4

Ներածական մաս. Է «ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲ ընկերությունը նախատեսում է Երևան քաղաքի, Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդ փողոցի 5-րդ նրբանցք, 7/4 հասցեում՝ «Գառնի-Երևան Միսկոմբինատ» խմելու ջրատարի վրա կառուցել փհէկ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ՀՕ-150-Ն (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ի «բ» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակի:

Էլեկտրաէներգիա արտադրելու համար նախատեսվում է օգտագործել «Գառնի-Երևան Միսկոմբինատի» ջրատարի 1100.0-1015.0մ նիշերի միջև 85.0մ անկումը:

Նախագծային լուծումների մշակման համար հիմք են հանդիսացել՝

1. անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 30012017-01-0346 վկայականը,
2. տարածքի տեղագրական հանույթը,
3. N ՆԹ-1512-25 նախագծման թույլտվությունը՝ տրված 23.03.2025թ.,

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդ փողոցի 5-րդ նրբանցք 7/4 հասցեում և իրենից ներկայացնում է 3.716378 հա մակերեսով տարածք, որը վարձակալության իրավունքն ունի տրված է «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ին:

Տարածքն բարեկարգված, առանձնացված և ցանկապատված տարածք է, որը ներկայումս օգտագործվում է «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի կողմից:

ՓՀԷԿի կառուցումից հետո արտադրված էլեկտրաէներգիան նախատեսվում է օգտագործել միայն սեփական կարիքների համար: Փհէկի շինարարության համար կատարված տեխնիկա-տնտեսական հիմնավորման սխեմայի արդյունքում ստացվել են հետևյալ ցուցանիշները:



- հաշվարկային ելք ($\text{մ}^3/\text{վ}$) - 0.4
- ճնշումային խողովակաշարի երկարությունը (մ) - 1700
- հաշվարկային ճնշում (մ) - 65.6
- ՕԳԳ - 8.2
- տուրբինների քանակը - 1 հատ
- հաշվարկային հզորությունը (կՎտ) - 215
- էլ. էներգիայի տարեկան միջին արտադրանքը (մլն.կՎտժ) - 1.878

Փհէկը նախատեսվում է 215 կՎտ հզորությամբ և իր տարածքում նախատեսվում է կառուցել 10/0.4 կՎ լարման ենթակայան: Նոր ենթակայանը նախատեսվում է միացնել «Արեշ-2» 110/35/10 կՎ ենթակայանի 10 կՎ բաշխիչ սարքից սնվող 10 կՎ օդամալուխային գծի N2 խարսխային հենարանին՝ ճյուղավորումով, կառուցելով 10կՎ լարման էլեկտրահաղորդման գիծ: 10 կՎ ճյուղավորման սկզբում նախատեսվում է տեղադրել 10կՎ գծային բաժանիչ:

Փհէկն իր մեջ ներառում է հետևյալ կառուցվածքները՝ փականային հանգույց, 630 մմ տրամագծով, 70մ երկարությամբ շրջանցող ճնշումային մետաղական խողովակաշար, որը կմիանա «Գառնի-Երևան Միսկոմբինատի» ջրատարին:

Կայանային հանգույց (փհէկի շենք), հեռացնող համակարգ, որով հիդրոագրեգատի օգտագործած ջուրը տեղափոխվում է «Արարատյան» ՕԿՁ: Նոր շրջանցող ճնշումային խողովակաշարը սկիզբ է առնում «Գառնի-Երևան Միսկոմբինատ» ջրատարի հետ միացման հանգույցից, որից հետո Արարատյան ՕԿՁ տարածքում նախատեսվում է տեղադրել DN600 կարգավորիչ փական:

Փականային հանգույցն իրենից ներկայացնում է փականահոր՝ 2.3x2.3մ չափերով և 2.5մ բարձրությամբ, որն իրականացվելու է B15 դասի միաձույլ ե/բ-ից: Փականահորում նախատեսվում է տեղադրել DN630 տրամագծի սողնակ: Փականահորն իրականացվելու է B15 դասի միաձույլ ե/բ-ից:

Կայանային հանգույցի տարածքի հատակագծային չափերն են՝ 27.0x16.0մ, որի նախագիծն իրականացված է ՀՀ գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան: Կայանային հանգույցի ամբողջ պարագծով տեղադրվելու է մետաղական ցանկապատ: Ամբողջ շենքի պարագծով նախատեսվում է իրականացնել սալիկապատ մայթ 0.85 մ լայնությամբ: Փհէկի շենքը հատակագծում ունի Դ-աձև տեսք, որը բաղկացած է միմյանցից հակասեյսմիկ կարանով անջատված 2 մասնաշենքից՝ հիմնական շենքից և կից կառուցված օժանդակ շինություն:

Առաջին հիմնական շինությունը՝ ուղղանկյունաձև հատակագծով միահարկ կառույց է, որի հատակագծային չափերը կազմում են. 6.00մ+4.00մ երկայնական և 8.60մ լայնական ուղղություններով: Կառույցի համար կրող կառուցվածք է ծառայում կոշտ հանգույցներով միաձույլ ե/բ տարածական շրջանակային հիմնակմախքը՝ միաձույլ ե/բ խաչահատվող ժապավենաձև հիմքի հեծաններ 600 մմ բարձրությամբ և 800 մմ լայնությամբ: Կառույցի մեջ նախատեսվում է իրականացնել ամբարձիչ, տեղադրվող ամբարձիչի բեռնամբարձողականությունը 6,3 տոննա: Փհէկի շենքում նախատեսված է ագրեգատի հսկման և կառավարման համակարգ: Նախատեսված են նաև վերանորոգման համար մոնտաժային հրապարակ: Երկրորդ օժանդակ շինությունը՝ միահարկ է, հարկի բարձրությունը՝



3.30մ: Հատակագծում կառույցն ուղղանկյուն է, հատակագծային չափերը՝ 2.50մ+4.60մ երկայնական և 4.60մ լայնական ուղղություններով: Կառույցի համար կրող կառուցվածք է ծառայում կոշտ հանգույցներով միաձույլ ե/բ տարածական շրջանակային հիմնականախքը՝ միաձույլ ե/բ խաչահատվող ժապավենաձև հիմքի հեծաններ 600 մմ բարձրությամբ և 600 մմ լայնությամբ, միաձույլ ե/բ սյուներ 300x300 մմ չափերով, պարզունակներ 300 մմ լայնությամբ ու 450 մմ բարձրությամբ::

Ենթատուրբինային մարիչ հորը հատակագծում ունի 1.96x1.96մ, H=2.2մ չափեր: Ագրեգատի օգտագործած ջուրը հոսում է դեպի հեռացման համակարգ: Հեռացման համակարգը 2.2x4.5մ հատակագծային և 1,4x4.1մ ներքին չափերով և 1.95-2.2մ խորությամբ երկաթբետոնե կառուցվածք է: Հեռացման համակարգը իրականացվում է B20 դասի միաձույլ ե/բ-ից, որից սկիզբ է առնում ոչ ճնշումային 900 մմ տրամագծով հեռացնող խողովակաշարը: Խողովակաշարի երկարությունը 32.5 մ: Հիդրավիկական պարամետրերից ելնելով նիշերի տարբերությունը կազմում է 0,4 մ: Հեռացնող համակարգը ոչ ճնշումային խողովակաշարով միացվում է Արարատյան ՕԿՁ գործող ավազանին՝ առանց ավազանի պատերին կամ ծածկի վրա հավելյալ բեռնվածքի:

«Արարատյան ՕԿՁ» փհէկի կառուցման համար նախատեսվում է 1x190կՎտ հզորության, 380Վ լարման ասինքրոն գեներատորով հիդրոագրեգատներ՝ 1x203կՎտ հզորության, 10կՎ լարման, 50Հց հաճախականություն սինքրոն գեներատորով: Փհէկի հիմնական հիդրոուժային սարքավորումը (տուրբին-գեներատոր) նախատեսվում է Պելտոն 1 տիպի, որը նախատեսվում է տեղադրել Գառնի-Երևան Միսկոմբինատի ջրատարի վրա: Խմելու ջրի հետ անմիջական շփում են ունենալու միայն հիդրոագրեգատի աշխատանքային անիվը (տուրբին) և խխունջաձև մարմինը, որտեղ բացակայում են քսայուղային նյութերի օգտագործումը: Դրանք իրականացված են չժանգոտվող պողպատից, սարքավորման տեխնիկական բնութագրին համաձայն կիրառելի են նաև խմելու ջրի համար և համապատասխանում են միջազգային ISO և IEC ստանդարտներին: Վթարային իրավիճակների դեպքում հիդրոտուրբինն իր մեջ ներառելու է անվտանգության (BY-PASS DN 200) համակարգը: Ընդհանուր արդյունավետությունը (ՕԳԳ) հաշված է ելնելով հետևյալ տվյալներից՝ գեներատորի ՕԳԳ - 94.9%, տուրբինի ՕԳԳ - 88.1%, ագրեգատի ընդհանուր ՕԳԳ՝ 82%: Փհէկի տեխնոլոգիական սարքավորումը իր մեջ է ներառում մեխանիկական սարքավորում, որը տեղադրվում է գլխային հանգույցում և մեխանիկական ու հիդրոուժային, որը տեղադրվում է փհէկի շենքում: Փհէկի շենքի հողանցման արտաքին կոնտուրը նախատեսված է Ø12մ տրամագծով, 3մ եկարությամբ էլեկտրոդներով, որոնք միացված են 40x4մմ շերտապողպատով՝ տեղադրված հողի մակերևույթից 0.7մ խորության վրա և որոնք միացվում են կոնտուրին:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի ազդեցություններ, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, դրանք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն սահմանափակ ու կարճատև:

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօդանավային փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակողման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումներով: Համապատասխան ընթացքում



միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը կանխատեսվում է, որ աշխատատեղերում և հարակից տարածքներում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումների անհրաժեշտություն չկա, քանի որ մոտակայքում բնակելի շինություններ չկան: Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա Փհէկի շենքի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի համայնքի կողմից սահմանված վայր: Գործունեության իրականացման տարածքները վաղուց ազդեցության ենթարկված տարածքներ են և լանջափտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Պարճառաքանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեն, առողջապահական և աշխատանքի տեսչական մարինը, Երևանի քաղաքապետարանը և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. օգոստոսի 22-ին՝ ժամը 10:00-ին, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում կայացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը, որի ընթացքում բարձրացվել են առաջարկներ Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների սպառողներին ավելի որակյալ ջրով ապահովելու վերաբերյալ, հնարավոր ջրի որակի մոնիթորինգի կամ ֆիլտրացիոն համակարգերի ներդրման հնարավորությունները դիտարկելու համար: Փորձաքննական գործընթացում նշված հարցերի իսկության պարզաբանման համար առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից իրականացվել է հարցումներ՝ վերջին մեկ տարվա ընթացքում տվյալ վարչական շրջաններում իրականացված ջրի նմուշառման որակական ցուցանիշների և ֆիլտրացիոն համակարգերի տեղակայման անհրաժեշտության վերաբերյալ: Հարցմանը ի պատասխան հստակեցվել է, որ գարուն-ամառ սեզոնայնությունից ելնելով «ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ անհրաժեշտ ջրաքանակը բնակիչներին հասցնելու համար օգտվում է Արարատյան արտեզյան խորքային հորերի ջրերից, որով և պայմանավորված է



խմելու ջրի հատուկ համը, սակայն լաբորատոր բոլոր ցուցանիշները փաստել են դրանց խմելու ջրի որակին համապատասխանությունը և լրացուցիչ ագրեգատների տեղադրման անհրաժեշտություն բաշխիչ ցանցում չի առաջացել:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները զերծ պահել շինարարական աղբից, փոշին նվազագույնի հասցնելու նպատակով շինարարության ընթացքում ցանկապատել շինարարական հրապարակները, շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:

2. Ջրառում ջրի կազմի բնական կայունության պահպանման և դրա աղտոտման կանխման և վերացման համար ապահովել առողջապահության նախարարի 2002թ նոյեմբերի 29-ի «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N 2-III-Ա2-2 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» N 803 հրամանի պահանջները:

3. Խմելու ջրի որակի արտադրական հսկողությունն ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի «ԽՄԵԼՈՒ ԶՈՒՐ: ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ: ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» N 2-III-Ա 2-1 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 876 հրամանի պահանջներին համապատասխան:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գառնի-Երևան Միսկոմբինատ» ջրատարի վրա 215 կՎտ հզորությամբ «Արարատյան ՕԿԶ» փհէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Էդիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան